Հավելված
ՀՀ կառավարության 2013 թ.
մայիսի 16-ի նիստի N 19
արձանագրային որոշման

ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԱՌԱՆՁԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ

I. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Միջազգային առողջապահական կանոնների համաձայն, պետական կառավարման և տարածքային կառավարման մարմիններին վերապահվում են հետևյալ ընդհանուր իրավասությունները.

1) Միջազգային առողջապահական կանոնների համաձայն առանձին պետական կառավարման մարմինները կոչված են ապահովելու Միջազգային առողջապահական կանոնների պահանջները՝ համակարգման տվյալ ոլորտում իրենց լիազորությունների շրջանակներում:

2) Միջազգային առողջապահական կանոնների իրականացման գործընթացում սույն որոշմամբ նշված պետական կառավարման մարմինները ղեկավարվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն որոշմամբ:

3) Միջազգային առողջապահական կանոնների համաձայն առանձին պետական կառավարման մարմիններն՝

ա. իրենց լիազորությունների շրջանակներում իրականացնում են իրենց վերապահված գործունեություն, ինչն առնչվում է Միջազգային առողջապահական կանոններին,

բ. ապահովում են իրենց համակարգում Միջազգային առողջապահական կանոնների հարցերով պատասխանատուների նշանակումը, հանրային առողջապահության ոլորտում վտանգ ներկայացնող դեպքերի մասին հաղորդումը դեպքն արձանագրած կառույցի պատասխանատուին, Միջազգային առողջապահական կանոնների հարցերով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության պատասխանատուին և,

հաջորդիվ, Ազգային համակարգող մարմնին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 26-ի N 1138-Ն որոշման պահանջների,

գ. համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 26-ի N 1138 -Ն որոշման՝ գնահատում են երևույթները և դրանց մասին սահմանված կարգով հաղորդում են Միջազգային առողջապահական կանոնների հարցերով ազգային համակարգող մարմնին (այսուհետ՝ Ազգային համակարգող մարմնին), ներկայացնում են իրենց համակարգում կանոնների պահանջների կատարմանը և կանոնների ներդրմանը վերաբերող հարցերի մասին կիսամյակային տեղեկատվություն և կենսաբանական, քիմիական, ճառագայթային գործոններին, վտանգներին առնչվող՝ իրենց կողմից իրականացվող և պլանավորված քաղաքականության, ռազմավարությունների և ծրագրերի վերաբերյալ տարեկան տեղեկատվություն.

դ. համաձայն կոնկրետ շահագրգիռ մարմնի և Ազգային համակարգող մարմնի ղեկավարների համատեղ հրամանով սահմանված գործընթացների ստանդարտ ընթացակարգերի՝ իրականացնում են կոնկրետ գործունեություն որևէ առանձին հարցի ուղղությամբ.

ե. առաջարկություններ են ներկայացնում Ազգային համակարգող մարմնին Միջազգային առողջապահական կանոնների պահանջների կատարման ապահովման ուղղությամբ.

4) Շահագրգիռ մարմինները Միջազգային առողջապահական կանոններին առնչվող տեղեկատվությունը միմյանց կարող են փոխանցել Ազգային համակարգող մարմնի միջոցով:

II. ԱՌԱՆՁԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. ***Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը***, սույն հավելվածի 1-ին կետով վերապահված իրավասություններից բացի, վերապահվում են հետևյալ իրավասությունները՝

1) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, որպես Ազգային համակարգող մարմին, օրենքով սահմանված կարգով, իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 16-ի N 809-Ն և 2010 թվականի օգոստոսի 26-ի N 1138-Ն որոշումներով իրեն վերապահված գործառույթները,

2) մշակում է Միջազգային առողջապահական կանոնների ներդրման գործընթացն ապահովող ռազմավարություններ, քաղաքականություն, պետական նպատակային ծրագրեր և դիտարկում դրանց իրականացումը,

3) իրականացնում է կենսաբանական, քիմիական և ճառագայթային գործոններով պայմանավորված հիվանդությունների, թունավորումների և ախտահարումների համաճարակաբանական հսկողություն,

4) իրականացնում է առողջապահության համակարգին հատկացված ֆինանսավորման շրջանակներում Միջազգային առողջապահական կանոնների ներդրման համար ֆինանսական միջոցների հաշվարկում և հատկացում,

5) աջակցում է բժշկական կադրերի պատրաստումը՝ Միջազգային առողջապահական կանոնների ներդրման շրջանակներում և իրականացնում է գործընթացի դիտարկում,

6) ապահովում է կենսաբանական, քիմիական և ճառագայթային գործոնների, դրանցով պայմանավորված հիվանդությունների և ախտահարումների ուսումնասիրման ուղղությամբ գիտական հետազոտությունների իրականացումն, այդ թվում՝ նյութատեխնիկական հագեցվածություն, և արդյունքների ներդրում գործնականում,

7) կազմակերպում և իրականացում է Միջազգային առողջապահական կանոնների ներդրման, ինչպես նաև ոլորտին առնչվող առանձին հարցերին նվիրված ազգային բազմոլորտ աշխատաժողովներ և քննարկումներ,

8) ձևավորում է Միջազգային առողջապահական կանոնների ներդրման, ինչպես նաև ոլորտին վերաբերող առանձին հարցերին առնչվող միջգերատեսչական, մասնագիտական հանձնաժողովներ և խորհուրդներ,

9) իրականացնում է Միջազգային առողջապահական կանոնների համաձայն գործող օրենսդրության գնահատման և վերանայման գործընթացի համակարգում,

10) իրականացնում է մարզային մակարդակում Միջազգային առողջապահական կանոնների ներդրման գործընթացի համակարգում,

11) ապահովում է բնակչությանը, առանձին կառույցներին /պետական և մասնավոր/ Միջազգային առողջապահական կանոնների և դրանց ներդրման գործընթացի վերաբերյալ շարունակական իրազեկումը,

12) մասնակցում է Հայաստանի Հանրապետությունում վարակիչ հիվանդությունների կանխարգելման համար անհրաժեշտ պահուստային միջոցների ձևավորման, պահպանման և օգտագործման գործընթացին,

13) սննդային գործոնով պայմանավորված վարակիչ հիվանդությունների ու թունավորումների կամ մարդկանց և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների հայտնաբերման դեպքում իրականացնում է սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողություն իրականացնող մարմիններին տեղեկացում, դրանց առաջացման, ինչպես նաև տարածման պատճառների ու պայմանների հայտնաբերում, նմուշառման և լաբորատոր հետազոտությունների իրականացում, սննդային գործոնով պայմանավորված վարակիչ և ոչ վարակիչ զանգվածային հիվանդությունների և թունավորումների կանխարգելման նպատակով սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպում,

14) իրականացնում է բռնկումների (համաճարակների), քիմիական և ճառագայթային գործոններով պայմանավորված արտակարգ իրավիճակների ժամանակ, ինչպես նաև առօրյա պայմաններում բնակչության (առանձին քանակակազմերի) իրազեկման, բժշկահիգիենիկ գիտելիքների տարածման և առողջ ապրելակերպի քարոզչության գործընթացի կազմակերպում և իրականացում, ինչպես նաև՝ համակարգում,

15) իրականացնում է Միջազգային առողջապահական կանոնների ներդրման շրջանակներում սահմանված կարգով համապատասխան վարչական, վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթիկներ, տեղեկանքներ և այլն), տեղեկատվական ձևերի ներդրում, դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա՝ ռեգիստրների վարում,

16) համակարգում է Միջազգային առողջապահական կանոնների Հավելված 1-ով և 2-ով ամրագրված սխեմաների կիրարկումը.

17) օրենդրությամբ իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում համակարգում է համընդհանուր լաբորատոր ցանցին առնչվող գործունեությունը,

18) համակարգում է ազգային մակարդակում կենսաբանական և քիմիական վտանգների ժամանակ արագ արձագանքման թիմի ձևավորման գործընթացը և դրա գործունեությունը,

19) սահմանում է կլինիկական ռեֆերենս կենտրոնների ցանկը և այդ կենտրոններ հիվանդների տեղափոխման ընթացակարգը,

20) իրականացնում է առողջապահության բնագավառում միջազգային պայմանագրերի նախագծերի մշակում՝ ներառելով Միջազգային առողջապահական կանոններին առնչվող դրույթներ,

21) Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15- N 1316-Ն որոշման պահանջներին համապատասխան իրականացնում է՝

ա. Հայաստանի Հանրապետությունում համաճարակների պատրաստվածության առկա կարողությունների գնահատում, համաճարակների պատրաստվածության մոնիթորինգի, վերլուծության և գնահատման ցուցանիշների մշակում, համաճարակների վարման նորմատիվ-իրավական ակտերի մշակում, համաճարակների պատրաստվածության ընդհանուր ծրագիր /պլանի մշակում և գործադրում,

բ. համաճարակների և բռնկումների արագ արձագանքման, տեղայնացման և վերացման գործընթացի համակարգում,

գ. մասնակցում է սահմանափակող միջոցառումների իրականացմանը և կարանտինի սահմանմանը,

դ. մասնակցում է մարդկանց և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների, սննդային թունավորումների դեպքերի, բռնկման/ համաճարակի առաջացման, ինչպես նաև տարածման պատճառների ու պայմանների հայտնաբերմանը, նմուշառման և լաբորատոր հետազոտությունների՝ շահագրգիռ մարմինների հետ համատեղ իրականացմանը, սննդային գործոնով պայմանավորված վարակիչ և ոչ վարակիչ զանգվածային հիվանդությունների, թունավորումների կանխարգելման նպատակով սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպմանը և իրականացմանը,

ե. ապահովում է Հայաստանի Հանրապետության տարածքում պետական հիգիենիկ և հակահամաճարակային հսկողության, սանիտարական կանոնների և նորմերի, հիգիենիկ նորմատիվների պահանջների կատարման ու հակահամաճարակային միջոցառումների իրականացման նկատմամբ հսկողության իրականացումը, Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտումների բացահայտումը և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը, օրենսդրության խախտման դեպքում պատասխանատվության (ներգործության) համապատասխան միջոցների կիրառումը,

զ. կազմակերպում և իրականացնում է բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում վարակիչ հիվանդությունների, թունավորումների կանխարգելման նպատակով սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումներ ու կանխարգելիչ աշխատանքներ, ներկայացնում է առաջարկություններ իրավասու մարմիններին,

է. կազմակերպում է բնակչության շրջանում վարակիչ հիվանդությունների, թունավորումների օջախներում հակահամաճարակային միջոցառումներ և վերահսկում է դրանց իրականացումը,

ը. իրականացնում է բնակչության զանգվածային անընկալության ապահովման միջոցառումների (կանխարգելիչ պատվաստումների) կատարման նկատմամբ հսկողություն,

թ. կազմակերպում և իրականացնում է վարակիչ հիվանդությունների, թունավորումների առաջացման ու դրանց տարածման պատճառների և պայմանների բացահայտում (հայտնաբերում) ու քննում, բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության սոցիալ-հիգիենիկ զննումներ (մոնիտորինգի), դրանց արդյունքների գիտական հիմնավորված վերլուծություն, ռիսկերի գնահատում և կառավարում,

22) հմակարգում է վարակիչ հիվանդությունների, քիմիական և ճառագայթային վտանգների դիմակայման ուղղությամբ կրթական ծրագրի մշակումը և գործադրումը,

23) մասնակցում է Միջազգային առողջապահական կանոնների ներդրման շրջանակներում իրականացվող բազմոլորտ վարժանքներին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 07.06.2012թ. նիստի №22 արձանագրային որոշման պահանջներին համապատասխան,

24) մասնակցում է հիվանդությունների առողջապահական և անասնաբուժական ինտեգրացված հսկողության գործընթացին,

25) ապահովում է ճանապարհորդներին /մեկնողներ և ժամանողներ/ խորհրդատվության տրամադրման և պատվաստումների իրականացման գործընթացը.

26) մասնակցում է Հայաստանի Հանրապետության պետական սահմանի համալիր կառավարման գործընթացին՝ Միջազգային առողջապահական կանոնների ներդրման շրջանակներում,

27) մասնակցում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ծրագրի մշակմանը և գործադրմանը՝ համակարգելով կենսաբանական և քիմիական վտանգների ժամանակ հանրային առողջության ոլորտում արտակարգ իրավիճակների միջոցառումները,

28) ապահովում է Ազգային համակարգող մարմնի և Առողջապահության համաշխարհային կազմակերպության Միջազգային առողջապահական կանոնների հաղորդակցման կետերի միջև կանոնավոր կապը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի օգոստոսի 6-ի N 913-Ն որոշման պահանջներին համապատասխան,

29) համակարգում է օտարերկրյա պետություններին աջակցելու համար ազգային փորձագետների խմբի ձևավորման գործընթացը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 10-ի N 1446-Ն որոշման պահանջներին համապատասխան,

30) իրականացնում է «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իր իրավասությունների շրջանակներում ամրագրված գործառույթները,

31) սահմանի նշանակված անցման կետերում «հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ» ներկայացնող կամ դրա կասկածով դեպքեր արձանագրելիս իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 777-Ն որոշմամբ ամրագրված գործառույթները,

32) քիմիական գործոնով պայմանավորված արտակարգ իրավիճակ ներկայացնող դեպքերի դեմ պայքարի գործընթացում իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 8-ի N 861-Ն որոշմամբ ամրագրված գործառույթները,

33) իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 16-ի N1186-Ն որոշմամբ ամրագրված գործառույթները,

34) մարդկանց և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների, սննդային թունավորումների դեպքեր, բռնկում/ համաճարակ հայտնաբերելիս իրականացնում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության և բնապահպանության նախարարությունների հետ կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում՝ համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի N 480-Ն որոշմամբ հաստատված կարգի,

35) իրականացնում է սննդամթերքի հետ կապված հանրային առողջության ոլորտում գիտականորեն հիմնավորված վերլուծություն, գնահատում և կառավարում,

36) միջուկային և ճառագայթային վթարների/միջադեպերի դեպքում իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2328-Ն որոշմամբ հաստատված կարգով ճառագայթահարված անձանց բուժման հետ կապված գործառույթները:

3. ***Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը***, սույն հավելվածի 1-ին կետով վերապահված իրավասություններից բացի, վերապահվում են հետևյալ իրավասությունները՝

1) ապահովում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 825-Ն որոշմամբ ամրագրված կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնության կազմակերպումը, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու գործընթացը և սահմանված այլ գործառույթներ,

2) ապահովում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի N 1543-Ն որոշմամբ ամրագրված Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգի պահպանումը,

3) ապահովում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 7-ի N 960-Ն որոշմամբ ամրագրված կալանավորված անձանց և դատապարտյալներին արգելված աշխատանքների և պաշտոնների չներգրավելը,

4) ապահովում է քրեակատարողական հիմնարկներում պահվող դատապարտյալների և կալանավորված անձանց սննդի օրական միջին չափաբաժինները՝ ՀՀ կառավարության 2003թ ապրիլի 10-ի 413-Ն որոշման համաձայն:

4. ***Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը*** սույն հավելվածի 1-ին կետով վերապահված իրավասություններից բացի, վերապահվում են հետևյալ իրավասությունները՝

1) Ազգային համակարգող մարմնի և համապատասխան շահագրգիռ մարմինների հետ մշակում և ներդնում է կենսաբանական, քիմիական և ճառագայթային գործոններով պայմանավորված արտակարգ իրավիճակների ժամանակ գործողությունների պլան-ժամանակացույց ըստ մակարդակների՝ ազգային, մարզային և համայնքային, որոնք արտակարգ իրավիճակներում կիանդիսանան բնակչության պաշտպանության պլանների բաղկացուցիչ մաս,

2) Ազգային համակարգող մարմնի և համապատասխան շահագրգիռ մարմինների հետ գնահատում և ձևավորում է արտակարգ իրավիճակների ժամանակ տուժածներին օգնություն ցուցաբերելու հնարավորությունները, առաջարկություններ է ներկայացնում վտանգավոր գոտուց բնակչության տարահանման վերաբերյալ և աջակցում տարահանման գործընթացի իրականացմանը,

3) իրականացնում է կառավարման մարմինների և բնակչության իրազեկումն ու ազդարարումը՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 16-ի N 1304-Ն որոշմամբ,

4) շահագրգիռ կառույցների համագործակցությամբ իրականացնում է արտակարգ իրավիճակների առաջացման ռիսկերի գնահատում, արտակարգ իրավիճակներում ճառագայթային, քիմիական, մանրէաբանական մշտական հսկողության համակարգի աշխատանքների համակարգում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. հուլիսի 29-ի N 1064-Ն որոշման և շահագրգիռ նախարարությունների հետ համատեղ հրամանների պահանջների,

5) փրկարար ծառայության ճառագայթային, քիմիական և կենսաբանական մոնիթորինգի խմբերի կողմից իրականացվում է տարբեր բնույթի ախտահարված և աղտոտված օջախներում ճառագայթաակտիվ և քիմիական նյութերի հայտնաբերում, տեսակի որոշում, նմուշառում, մասնագիտացված հետախուզություն, կենսաբանական ազդակների արագ հայտնաբերում (էքսպրես ինդիկացիա) և հավաքած նմուշների արագ տեղափոխում համապատասխան լաբորատորիաներ՝ համագործակցելով Ազգային

համակարգող մարմնի հետ (կազմակերպում է շրջակա միջավայրի կենսաբանական իրավիճակի դիտարկում և հսկողություն),

6) Ազգային համակարգող մարմնի և համապատասխան շահագրգիռ մարմինների համագործակցությամբ կենսաբանական, քիմիական և ճառագայթային, սննդի անվտանգության ոլորտներում կազմակերպում և իրականացնում է վարժանքներ, որից հետո իրականացնում է դրանց արդյունքների վերլուծություն, գնահատում, պատրաստվածության ուժեղացման խնդիրների վերհանում և դրանց լուծման եղանակների ընտրություն,

7) կազմակերպում և համակարգում է կենսաբանական, քիմիական և ճառագայթային տեխնածին վթարների և այլ արտակարգ իրավիճակների դեպքում անվտանգության համակարգում ներառված նախարարությունների գործունեությունը՝ դրանց իրավասությունների սահմաններում,

8) Հայաստանի Հանրապետության կառավարություն 2012 թվականի հոկտեմբերի 4-ի N 1297–Ն որոշմամբ սահմանված կարգով իրականացնում է՝

ա. ներգրավված (շահագրգիռ) մարմիններին ստեղծված իրավիճակի մասին տեղեկատվության տրամադրում,

բ. վտանգավոր տարածքների բացահայտման գործընթացում ներգրավված մարմինների գործունեության համակարգում ու փոխգործողության կազմակերպում ռազմական դրության պայմաններում,

գ. ճառագայթային, քիմիական օպերատիվ հետախուզության և մոնիթորինգի իրականացում.

դ. Հայաստանի Հանրապետության տարածքում ռադիոակտիվ նյութերով աղտոտվածության, քիմիական նյութերով և միկրոօրգանիզմներով վարակվածության մասին տեղեկատվության հավաքում, վերլուծություն և ընդհանրացում,

ե. Հայաստանի Հանրապետությունում քիմիական և մանրէաբանական իրավիճակի կանխատեսում և դրա կարգավորման վերաբերյալ առաջարկությունների մշակում,

զ. մասնակցություն մթնոլորտի, ջրային ռեսուրսների ու տեղանքի՝ մարտական և ուժեղ ներգործող թունավոր նյութերով վարակվածության որոշմանը,

է. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության պետական ռեզերվների գործակալությունը արտակարգ իրավիճակների դեպքում, բնակչությանն ու վթարի գոտում աշխատանքներ կատարող փրկարարական անձնակազմը ապահովելու նպատակով իրականացնում է պետական պահուստում կուտակված

վառելիքաքսուքային նյութերի, սննդամթերքի և առաջին անհրաժեշտության միջոցների, անհատական պաշտպանության միջոցների բացթողումն ու բաշխումը: Անհրաժեշտության դեպքում գործակալությունը կազմակերպում է մարդասիրական օգնության ստացումը, պահեստարաններում, ստացված ապրանքների պահպանումը և բաշխումը՝ ՀՀ արտակարգ իրավիճակների պետական հանձնաժողովի որոշման հիման վրա,

ը. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Պահուստ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, արտակարգ իրավիճակների դեպքում, կատարելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի պետական ռեզերվների գործակալության պետական նյութական արժեքների պահպանության, թարմացման և բացթողնման գործառույթները, համապատասխան հրահանգների պայմաններում, կարող է ապահովել որոշակի դեղորայքի, բժշկական սարքավորումների, ախտահանող սարքերի և պաշտպանական միջոցների բացթողում,

թ. «Լազուր» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով արտակարգ իրավիճակների դեպքում պետական պահուստից բաց է թողնում սննդամթերք,

9) մասնակցում է Ազգային արագ արձագանքման թիմի ձևավորմանը,

5) «Սեյսմիկ պաշտպանության ծառայություն» գործակալության միջոցով իրականացնում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքի սեյսմիկ ռեժիմի վերահսկողություն և ռիսկի գնահատում,

6) «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունն իրականացնում է «Քիմիական պաշտպանություն», «Ճառագայթային պաշտպանություն», «Կենսաբանական պաշտպանություն» առարկաների ուսուցում, ինչպես նաև կազմակերպում է այդ առարկաների գծով վերապատրաստման դասընթացներ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության համակարգի տարբեր ոլորտների մասնագետների համար,

7) կազմակերպում է արձագանքող ուժերի, միջոցների և բնակչության վարակազերծման և սանիտարական մշակման աշխատանքները,

8) իրականացնում է հրդեհաշիջման, փրկարարական, վթարավերականգնողական և առաջին բուժօգնության միջոցառումներ,

9) տրամադրում է տեղեկատվություն փաստացի և կանխատեսվող եղանակային պայմանների մասին,

10) սահմանի նշանակված անցման կետերում «հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ» ներկայացնող կամ դրա կասկածով դեպքեր արձանագրելիս իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 777-Ն որոշմամբ ամրագրված գործողությունները,

11) քիմիական գործոնով պայմանավորված արտակարգ իրավիճակ ներկայացնող դեպքերի դեմ պայքարի գործընթացում իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 8-ի N 861-Ն որոշմամբ և ՀՀ կառավարության 16 հոկտեմբերի 2008 թվականի N1186-Ն որոշմամբ ամրագրված գործառույթները:

5. ***Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը***, սույն հավելվածի 1-ին կետով վերապահված իրավասություններից բացի, վերապահվում են հետևյալ իրավասությունները՝

1) համակարգում է կլիմայի գլոբալ փոփոխության հետևանքով խոցելիության և դրա դիմակայման գործընթացը,

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 8-ի N 1237-Ն որոշման պահանջների համաձայն՝

ա. շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում մշակում է պետական ծրագրեր,

բ. իրականացնում է շրջակա միջավայրի վիճակի, այդ թվում՝ նաև թափոնների հեռացման վայրերի պետական դիտանց (մոնիթորինգ),

գ. իրականացնում է շրջակա միջավայրի վիճակի, ներառյալ՝ միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված ռեժիմային ու հատուկ դիտարկումներ, ուսումնասիրություններ և կանխատեսումներ,

դ. իրականացնում է մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների պետական հաշվառում և չափաքանակների սահմանում,

ե. իրականացնում է վտանգավոր արդյունաբերական օբյեկտների «Անվտանգության վկայագրերի» նախագծերի փորձաքննական եզրակացությունների տրամադրում,

զ. իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրվող, օգտագործվող քիմիական նյութերի և առաջացող արտադրական ու սպառման թափոնների՝ ըստ վտանգավորության աստիճանի դասակարգում,

է. մշակում է Հայաստանի Հանրապետության ջրի ազգային քաղաքականությունը և իրականացնում է դրա գործադրման մոնիթորինգ,

ը. համաձայն ջրի ազգային ծրագրի՝ սահմանում է ջրային ռեսուրսների սահմանային թույլատրելի կոնցենտրացիան ու էկոլոգիական նվազագույն ելքերը և հաստատում է կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի որակական ու քանակական չափանիշները,

թ. իրականացնում է «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իր իրավասությունների շրջանակներում ամրագրված գործառույթները,

3) քիմիական գործոնով պայմանավորված արտակարգ իրավիճակ ներկայացնող դեպքերի դեմ պայքարի գործընթացում իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 8-ի N 861-Ն որոշմամբ ամրագրված գործառույթները,

4) իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 16-ի N1186-Ն որոշմամբ ամրագրված գործառույթները,

5) Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված «Անդրսահմանային կոնտեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման» կոնվենցիային և «Շրջակա միջավայրի ռազմավարական գնահատման մասին» արձանագրության 9-րդ հոդվածին համապատասխան առողջապահության ոլորտի լիազոր մարմնին է ներկայացում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության նյութերը՝ համապատասխան մասնագիտական փորձաքննության և կարծիք տալու համար,

6) իրականացնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության և գյուղատնտեսության նախարարությունների հետ կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդություններին առնչվող տեղեկատվության փոխանակում՝ համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի N 480-Ն որոշմամբ հաստատված կարգի:

6. ***Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը***, սույն հավելվածի 1-ին կետով վերապահված իրավասություններից բացի, վերապահվում են հետևյալ իրավասությունները՝

1) մարդկանց և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների, սննդային թունավորումների դեպքեր, բռնկում/ համաճարակ հայտնաբերելիս իրականացնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության և բնապահպանության նախարարությունների հետ կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում՝ համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի N 480-Ն որոշմամբ հաստատված կարգի:

2) Մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերացման միջոցառումների իրականացման գործում համագործակցում է պետական կառավարման ու շահագրգիռ մյուս մարմինների հետ:

3) Կենդանիների և մարդկանց համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների հայտնաբերման դեպքում տեղեկացնում է Առողջապահության նախարարության համապատասխան ստորաբաժանմանը, մասնակցում է համատեղ միջոցառումների կազմակերպմանը:

4) Կենդանիների և մարդկանց համար ընդհանուր հիվանդությունների սննդային թունավորումների հայտնաբերման դեպքում պետական սանիտարահիգիենիկ վերահսկողություն իրականացնող մարմնին տեղեկացնում է դրանց մասին և կազմակերպում և իրականացնում է համատեղ միջոցառումներ:

5) Մարդկանց և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների օջախների տարածքներում իրականացնում է հակաանասնահամաճարակային, անհրաժեշտության դեպքում՝ կարանտինային միջոցառումներ՝ շահագրգիռ մարմինների համագործակցությամբ;

6) Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կառավարման ոլորտում գործող Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 27-ի N 347-Ն որոշմամբ սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում իրեն վերապահված մասով, անհրաժեշտ տեղեկատվություն է ներկայացնում առողջապահության

ոլորտում պետական լիազոր մարմնի գործընթացի նկատմամբ հսկողություն իրականացնող ստորաբաժանմանը, ձեռնարկում է որոշմամբ սահմանված միջոցառումներ:

7) Իրականացնում է կենդանիների վարակիչ հիվանդությունների վարչական վիճակագրական հաշվառում և ռեգիստրների վարում:

8) Մշակում է կենդանիների հիվանդություններին, սննդամթերքի անվտանգությանը, առնչվող ռազմավարություններ, քաղաքականություն, պետական նպատակային ծրագրեր և դիտարկում դրանց իրականացման նկատմամբ:

9) Ապահովում է կենսաբանական, քիմիական և ճառագայթային գործոնների, դրանցով պայմանավորված կենդանիների հիվանդությունների և ախտահարումների ուսումնասիրման ուղղությամբ գիտական հետազոտությունների իրականացումը, այդ թվում՝ նյութատեխնիկական հագեցվածություն, և արդյունքների ներդրում գործնականում:

10) Մասնակցում է Հայաստանի Հանրապետությունում կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելման համար անհրաժեշտ պահուստային միջոցների ձևավորման, պահպանման և օգտագործման գործընթացին:

11) Իրականացնում է կենդանիների վարակիչ հիվանդությունների, դրանց բռնկումների/համաճարակների, քիմիական և ճառագայթային գործոններով պայմանավորված արտակարգ իրավիճակների ժամանակ, ինչպես նաև առօրյա պայմաններում բնակչության (առանձին քանակակազմերի) իրազեկման, գործընթացի կազմակերպում և իրականացում:

12) Ապահովում է Միջազգային առողջապահական կանոնների Հավելված 1-ով և 2-ով ամրագրված սխեմաների կիրարկումը:

13) Մասնակցում է համընդհանուր լաբորատոր ցանցին՝ անասնաբուժության և սննդի անվտանգության մասով:

14) Մասնակցում է ազգային մակարդակում կենսաբանական և քիմիական վտանգների ժամանակ արագ արձագանքման թիմի ձևավորմանը և դրա գործունեությանը:

15) Իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում անասնահամաճարակների պատրաստվածության առկա կարողությունների գնահատում, անասնահամաճարակների վարման նորմատիվ-իրավական ակտերի մշակում, անասնահամաճարակների պատրաստվածության ծրագիր /պլանի մշակում և գործադրում:

16) Իրականացնում է կենդանիների վարակիչ հիվանդությունների, քիմիական և ճառագայթային վտանգների դիմակայման ուղղությամբ կրթական ծրագրի մշակում և գործադրում, մասնակցում է Միջազգային առողջապահական կանոնների ներդրման շրջանակներում իրականացվող բազմոլորտ վարժանքներին:

17) Հայաստանի Հանրապետությունում կենդանիների վարակիչ ու ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի համալիրում Սննդամթերքի անվտանգության ծառայությունը վերահսկում է հակաանասնահամաճարակային և անասնաբուժասանիտարական կանխարգելիչ և հարկադիր միջոցառումների իրականացման աշխատանքները:

18) Մասնակցում է հիվանդությունների անասնաբուժական և առողջապահական ինտեգրացված հսկողության գործընթացին:

19) Մասնակցում է արտակարգ իրավիճակներում կենդանիների պաշտպանության ծրագրի մշակմանը և գործադրմանը:

20) Սննդամթերքի անվտանգության ծառայությունն իրականացնում է սննդի արտադրության, պահպանման, տեղափոխման, վերամշակման, իրացման (արտադրության և շրջանառության փուլեր) բոլոր փուլերում սննդամթերքի անվտանգությանն առնչվող նորմատիվ փաստաթղթերով սահմանված պարտադիր պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողություն:

21) Սննդամթերքի անվտանգության ծառայությունն իրականացնում է կենդանիների զանգվածային անընկալության ապահովման միջոցառումների (կանխարգելիչ պատվաստումների) կատարման նկատմամբ հսկողություն:

22) Սահմանի նշանակված անցման կետերում «հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ» ներկայացնող կամ կասկածելի դեպքեր արձանագրելիս Սննդամթերքի անվտանգության ծառայությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 777-Ն որոշմամբ ամրագրված գործառույթները:

23) Քիմիական գործոնով պայմանավորված արտակարգ իրավիճակ ներկայացնող դեպքերի դեմ պայքարի գործընթացում Սննդամթերքի անվտանգության ծառայությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 8-ի N 861-Ն որոշմամբ ամրագրված գործառույթները;

24) Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության միջոցով տալիս է բույսերի պաշտպանության միջոցների գրանցման մասին եզրակացություն՝ առողջապահության, բնապահպանության, կրթության և գիտության ոլորտում պետական լիազոր մարմինների մասնագիտական դրական եզրակացությունների հիման վրա:

25) Սննդամթերքի անվտանգության ծառայությունն ապահովում է անասնաբուժության բնագավառի պետական լիազոր մարմնի անասնապահական տնտեսությունների, կենդանիների համարակալման, սպանդի, սպանդից ստացված մթերքի և հումքի փորձաքննության, սպանդանոցների և կենդանիների սեփականատերերի փոխհատուցման մասին տվյալների գրանցման գործընթացը և տեղեկատվական բազայի ստեղծումն ու վարումը:

26) Իրականացնում է ռիսկերի վերլուծություն և վերլուծության հիման վրա գործողությունների մոնիթորինգ:

27) ՀՀ կառավարության 2010 թվականի օգոստոսի 26-ի թիվ 1138-Ն որոշման և այլ իրավական ակտերով սահմանված կարգով փոխհամագործակցում և ապահովում է փոխտեղեկատվություն Ազգային համակարգող մարմնի հետ:

28) Սննդամթերքի անվտանգության ծառայությունը կազմում է սննդամթերքի հետ կապված գերակա ռիսկերի ցանկը և տրամադրում է տեղեկատվություն Ազգային համակարգող մարմնին:

29) Մշակում և գործադրում է սննդամթերքի անվտանգության հետ կապված «արտակարգ իրավիճակ» ներկայացնող դեպքերի հսկողության համակարգը և արձագանքման ծրագիրը;

30) Սննդամթերքի անվտանգության ծառայությունը ապահովում է վտանգավոր սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող վտանգավոր նյութերի և վտանգավոր սննդային հավելումների օգտահանման ու ոչնչացման գործընթացները՝ համաձայն ՀՀ կառավարության 2007 թվականի հուլիսի 12-ի N 824-Ն որոշման պահանջների:

31) Իրականացնում է ՀՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի N 1899-Ն որոշմամբ սահմանված գործառույթները՝

ա. սննդամթերքի անվտանգության ծառայության միջոցով ապահովում է թունաքիմիկատների օգտագործման, կիրառման նկատմամբ վերահսկողությունը, բույսերի պաշտպանության միջոցների և պարարտանյութերի փորձաքննությունը, մշակում և գործադրում է պարարտանյութերի ներմուծման մասին եզրակացության ձևերը, օրգանական

գյուղատնտեսության մեջ թույլատրելի և սահմանափակ թույլատրելի նյութերի անվանացանկն ու կիրառման կարգը.

բ. Իրականացնում է բուսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների վաճառք իրականացնող կազմակերպությունների լիզենզավորում.

գ. Շահագրգիռ նախարարությունների դրական եզրակացությունների հիման վրա թույլ է տալիս հանքային պարարտանյութերի գործածությունը;

7. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը, սույն հավելվածի 1-ին կետով վերապահված իրավասություններից բացի, վերապահվում են հետևյալ իրավասությունները՝

1) Շուկայի վերահսկողության ոլորտում՝

ա. իրականացնում է շուկայում իրականացվող ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա ռիսկային ոչ պարենային արտադրանքների, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների՝ բացառությամբ հանրային սննդի կազմակերպություններում մատուցվող ծառայությունների) վերաբերյալ տվյալների տեղեկատվական բազայում հավաքագրում, մշակում, ամփոփում և հանրային առողջապահության ոլորտում վտանգ ներկայացնող ոչ պարենային արտադրանքների, ապրանքների մասին տեղեկատվության հաղորդում Ազգային համակարգող մարմնին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 26-ի N 1138-Ն որոշման պահանջների համաձայն,

բ. ոչ պարենային արտադրանքների, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) հետ կապված՝ մարդու կյանքի, առողջության, շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության ռիսկի (վտանգի) գնահատման համակարգի հիման վրա իրականացնում է դիտարկում (մոնիթորինգ), ուսումնասիրություն, ստուգումներ և հանրային առողջապահության ոլորտում վտանգ ներկայացնող դեպքերի մասին հաղորդում Ազգային համակարգող մարմնին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 26-ի N 1138-Ն որոշման պահանջների համաձայն:

2) Զբոսաշրջության ոլորտում՝

ա. զբոսաշրջության ոլորտում ապահովում է համագործակցություն պետական կառավարման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման

մարմինների, զբոսաշրջային գործունեության սուբյեկտների հետ՝ Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջիկների ընդունման, սպասարկման, զբոսաշրջային ուղևորությունների կազմակերպման, տեղեկատվական բազայի ձևավորման, զարգացման ծրագրերի մշակման և մարքեթինգի իրականացման ուղղություններով,

բ. Վարում է զբոսաշրջության ոլորտի վարչական վիճակագրությունը:

3) Ստանդարտացման ոլորտում՝

ա. համակարգում է ազգային ստանդարտների և փորձարկման մեթոդների մշակման աշխատանքները և ընդունում և գործադրում է դրանք,

բ. իրականացնում է տեխնիկական կանոնակարգման, ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության գնահատման բնագավառներում մասնագետների ուսուցում և վերապատրաստում:

4) Հավատարմագրման ոլորտում սահմանված կարգով կազմակերպում և իրականացում է փարձարկման և տրամաչափարկման լաբորատորիաների հավատարմագրման գործընթացը:

8. ***Հայաստանի Հանրապետության էներգետիկայի եվ բնական պաշարների նախարարությանը***, սույն հավելվածի 1-ին կետով վերապահված իրավասություններից բացի, վերապահվում են հետևյալ իրավասությունները՝

1) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը իրեն վերապահված բնագավառում մշակում է նորմատիվ իրավական ակտերի նախագծեր՝ ուղղված տեխնածին ազդեցության նվազեցմանը,

2) ապահովում է էներգախնայողության և էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործման և շրջակա միջավայրի վրա ներգործության ստանդարտացման փաստաթղթերի մշակումը և ներդրումը,

3) իրականացնում է մարդկանց կյանքի, գույքի և շրջակա միջավայրի՝ տեխնիկական կանոնակարգերով և օրենսդրական այլ ակտերով սահմանված անվտանգության նորմերի պահպանման վերահսկողությունը,

4) մշակում է Հայաստանի Հանրապետությունում ռադիոակտիվ թափոնների կառավարման ռազմավարությունը և նպատակային ծրագիրը և գործադրում է դրանց իրականացման մոնիթորինգ:

9. ***Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը***, սույն հավելվածի 1-ին կետով վերապահված իրավասություններից բացի, վերապահվում են հետևյալ իրավասությունները՝

1) ապահովում է ուսումնական հաստատությունների լաբորատորիաներում կենսաանվտանգության, կենսաապահովության և որակի կառավարման համակարգի ներդրումը,

2) ուսումնական հաստատությունների լաբորատորիաներում, վարակիչ հիվանդությունների հարուցիչներ անջատելիս, սահմանված կարգով իրականացնում է հաղորդում Ազգային համակարգող մարմնին,

3) Ուսումնական հաստատություններում արձանագրված վարակիչ հիվանդություններ, թունավորումները սահմանված կարգով հաշվառում և հաղորդում է Ազգային համակարգող մարմնին,

4) աջակցում է կենսաբանական, քիմիական և ճառագայթային գործոնների, դրանցով պայմանավորված հիվանդությունների, թունավորումների և ախտահարումների վերաբերյալ գիտական թեմաների առաջադրմանը,

5) աջակցում է Առողջապահության նախարարությանը՝ բռնկումների, համաճարակների ժամանակ ուսումնական գործընթացի սահմանափակումների, արգելման ապահովման գործում,

6) վերահսկողություն է իրականացնում լիազոր մարմնի և ուսումնական հաստատության կողմից բուժկետերի գործունեության ապահովման նկատմամբ,

7) վերահսկողություն է իրականացնում ուսումնական հաստատության կողմից բժշկական (այդ թվում առողջապահական) փաստաթղթերի ճիշտ վարման նկատմամբ,

8) վերահսկողություն է իրականացնում լիազոր մարմնի և ուսումնական հաստատության կողմից ուսումնական հաստատություններում սանիտարական նորմերի պահանջների ապահովման և կատարման նկատմամբ,

9) Օրենքով սահմանված կարգով ապահովում է Հայաստանի Հանրապետությունում գործող բժշկական, էկոլոգիական և անասնաբուժական մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերում հանրային առողջապահության հարցերով նոր թեմաների ներդրումը,

10) աջակցում է բուհական և հետդիպլոմային կրթական ծրագրերում Միջազգային առողջապահական կանոնների, վարակիչ հիվանդությունների, քիմիական թունավորումների և ճառագայթային ախտահարումների վերաբերյալ թեմաների ընդգրկմանը,

11) աջակցում է ուսումնական հաստատություններում առողջապահական (բուժկանխարգելիչ) միջոցառումների իրականացմանը,

12) վերահսկողություն է իրականացնում լիազոր մարմնի և ուսումնական հաստատության կողմից սաների, ուսանողների և ուսուցչական, դասախոսական անձնակազմի նախնական և պարբերական բժշկական զննությունների կազմակերպման նկատմամբ,

13) ապահովում է նախնական և միջին մասնագիտական բժշկական կադրերի պատրաստումը՝ միջազգային առողջապահական կանոնների ներդրման շրջանակներում:

10. ***Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը***, սույն հավելվածի 1-ին կետով վերապահված իրավասություններից բացի, վերապահվում են հետևյալ իրավասությունները՝

1) իր սպասարկման ոլորտում իրականացնում է վարակիչ հիվանդությունների, քիմիական և ճառագայթային ախտահարումների դեպքերի հաշվառում,

2) կազմակերպում և իրականացնում է իր սպասարկման ոլորտում արձանագրված վարակիչ հիվանդությունների, քիմիական և ճառագայթային ախտահարումների դեպքերի, օջախների հետազոտություն, հիվանդների ախտորոշում, մեկուսացում, բուժում, կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումներ,

3) օրենքով սահմանված կարգով մասնակցում է Հայաստանի Հանրապետության տարածքում կամ դրա առանձին մասերում համաճարակների ժամանակ կարանտինային միջոցառումների անցկացմանը,

4) մասնակցում է կենսաբանական, քիմիական և ճառագայթային գործոններով պայմանավորված հիվանդությունների, ախտահարումների առանձին հարցերին վերաբերող նպատակային, ազգային ծրագրերի իրականացմանն իր սպասարկման ոլորտում,

5) քիմիական գործոնով պայմանավորված արտակարգ իրավիճակ ներկայացնող դեպքերի դեմ պայքարի գործընթացում իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 8-ի N 861-Ն որոշմամբ ամրագրված գործողությունները,

6) ապահովում է իր համակարգում գործող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների, հիգիենիկ և համաճարակային անվտանգության ծառայության, ռադիացիոն, քիմիական, կենսաբանական պաշտպանության ստորաբաժանման և այլ շահագրգիռ ստորաբաժանումների կողմից հանրային առողջապահության ոլորտում վտանգ ներկայացնող դեպքերի մասին հաղորդումն Ազգային համակարգող մարմնին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 26-ի N 1I38-Ն որոշման պահանջների:

11. ***Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությանը***, սույն հավելվածի 1-ին կետով վերապահված իրավասություններից բացի, վերապահվում են հետևյալ իրավասությունները՝

1) մասնակցում է միջազգային առողջապահական կանոնների համաձայն տարածքային կառավարման մարմնի կողմից ընդունված իրավական ակտերի գնահատման, վերանայման և լրամշակման աշխատանքներին,

2) մասնակցում է մարզում/ քաղաքում գործող կառույցների՝ Կանոնների վերաբերյալ իրազեկման գործընթացին՝ աջակցելով Ազգային համակարգող մարմնին,

3) մասնակցում է տարածքային կառավարման մարմնում հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ ներկայացնող դեպքերի էլեկտրոնային բազայի ձևավորման աշխատանքներին,

4) մասնակցում է կենսաբանական, քիմիական և ճառագայթային գործոնով պայմանավորված հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակների առաջացման սցենարով բազմոլորտ վարժանքների կազմակերպման աշխատանքներին,

5) մասնակցում է համաճարակների պատրաստվածության ընդհանուր ծրագրի մշակման և ներդրման աշխատանքներին,

6) մասնակցում է կենսաբանական քիմիական, վտանգների ժամանակ հանրային առողջապահության ոլորտում արտակարգ իրավիճակների ծրագրի մշակման և ներդրման աշխատանքներին,

7) աջակցում է մարդկանց և կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի աշխատանքներում բնակչության ընդգրկմանը,

8) աջակցում է պետական կառավարման մարմիններին բռնկումների/ համաճարակների նախապատրաստության և դրանց դեմ պայքարի գործընթացում՝

ա. առողջապահության կամ գյուղատնտեսության ոլորտում պետական կառավարման մարմնի առաջարկությամբ կամ իր նախաձեռնությամբ ձևավորում է առանձին հարցերին վերաբերող մշտական կամ ժամանակավոր արտակարգ հակահամաճարակային շտաբ և համակարգում է դրա գործունեությունը,

բ. քննության է առնում բռնկումների/ համաճարակների, վարակիչ հիվանդությունների, քիմիական, ճառագայթային ախտահարումների առանձին խնդիրների վերաբերյալ հարցեր:

9) Մասնակցում է բժշկահիգիենիկ կրթության ծրագրերի, գյուղական համայնքներում բնակչության և գյուղապետերի իրազեկվածության բարձրացման ծրագրերի մշակման և ներդնման աշխատանքներին:

10) Գործադրում է Ջրային օրենսգրքով սահմանված իր իրավասությունները՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեի միջոցով:

11) Իրականացնում է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մայիսի 19-ի N 633-Ն որոշմամբ սահմանված այլ իրավասություններ:

12. ***Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությանը***, սույն հավելվածի 1-ին կետով վերապահված իրավասություններից բացի, վերապահվում են հետևյալ իրավասությունները՝

1) վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը՝

ա. մշակում և իրականացնում է իր բնագավառում պետական քաղաքականությունը,

բ. իր լիազորությունների մասով մշակում է բնագավառը կարգավորող իրավական ակտերի նախագծեր,

գ. իր լիազորությունների սահմաններում հսկողություն է իրականացնում վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում փոխադրման և անհրաժեշտ փաստաթղթերի համար սահմանված պահանջների կատարման նկատմամբ,

դ. վտանգավոր բեռներ փոխադրելու համար տալիս է թույլտվություն, իսկ մարդու համար ախտածին՝ 1-ին և 2-րդ խմբերի միկրոօրգանիզմներ փոխադրելու դեպքում՝ նախապես

ստանալով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության համաձայնությունը,

ե. համաձայնեցնում է վտանգավոր բեռներ փոխադրելու երթուղին Հայաստանի Հանրապետության ոստիկանության հետ, եթե երթուղին անցնում է Երևան քաղաքի վարչական տարածքով՝ նաև Երևանի քաղաքապետի հետ,

զ. ապահովում է տեղեկությունների փոխանակումը շահագրգիռ գերատեսչությունների և կառույցների միջև,

է. իրականացնում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

2) Համակարգում է Համաշխարհային փոստային միության ակտերին համապատասխան թույլատրվող կենսաբանական նյութեր պարունակող փոստային առաքանիների առաքման գործընթացը:

3) Ապահովում է վթարային իրավիճակների և դրանց հետևանքների վերացման համար նախատեսված համապատասխան միջոցների առկայությունը:

4) Աջակցում է հեռուստա և ռադիոհաղորդումների կազմակերպմանը՝ վարակիչ հիվանդությունների, քիմիական և ճառագայթային ախտահարումների կանխարգելման և դիմակայման հարցերով:

5) Քիմիական գործոնով պայմանավորված արտակարգ իրավիճակ ներկայացնող դեպքերի դեմ պայքարի գործընթացում իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 8-ի N 861-Ն որոշմամբ ամրագրված գործողությունները:

13. ***Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը,*** սույն հավելվածի 1-ին կետով վերապահված իրավասություններից բացի, վերապահվում է հետևյալ իրավասությունը՝

1) իր իրավասության սահմաններում ապահովում է բյուջետային գործընթացի շրջանակներում Միջազգային առողջապահական կանոնների ներդրման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերաբերյալ հայտերի ուսումնասիրման ու առաջարկությունների ներկայացման գործընթացը:

14. ***Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությանը***, սույն հավելվածի 1-ին կետով վերապահված իրավասություններից բացի, վերապահվում են հետևյալ իրավասությունները՝

1) կազմակերպում և իրականացնում է իր սպասարկման ոլորտում արձանագրված վարակիչ հիվանդությունների, քիմիական և ճառագայթային ախտահարումների դեպքերի, օջախների հետազոտություն, հիվանդների ախտորոշում, մեկուսացում, բուժում, կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումներ,

2) աջակցում է Ազգային համակարգող մարմնին հանրային առողջապահության ոլորտում արտակարգ իրավիճակ ներկայացնող դեպքերի բնորոշման հարցում,

3) աջակցում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության սանիտարական կարանտինային կետերին պետական սահմանի անցման կետերում սանիտարակարանտինային հսկողություն իրականացնելու գործընթացում, մասնավորապես՝ վարակիչ հիվանդության կասկածով կամ հիվանդ անձանց նկատմամբ հսկողություն սահմանելու համար,

4) սահմանի նշանակված անցման կետերում «հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ» ներկայացնող կամ դրա կասկածով դեպքեր արձանագրելիս իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 777-Ն որոշմամբ ամրագրված գործառույթները,

5) քիմիական գործոնով պայմանավորված արտակարգ իրավիճակ ներկայացնող դեպքերի դեմ պայքարի գործընթացում իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 8-ի N 861-Ն որոշմամբ ամրագրված գործառույթները,

6) ստանում է տեղեկատվություն այլ ոլորտներում արձանագրված հանրային առողջապահության ոլորտում արտակարգ իրավիճակ ներկայացնող դեպքերի մասին և իրականացնում համապատասխան հետազոտություն ազգային անվտանգության տեսակետից՝ անհրաժեշտության դեպքում քննարկելով Ազգային համակարգող մարմնի հետ,

7) ապահովում է իր համակարգում գործող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից արձանագրած հանրային առողջապահության ոլորտում վտանգ ներկայացնող դեպքերի մասին հաղորդումը Միջազգային առողջապահական կանոնների հարցերով տվյալ բժշկական օգնություն և

սպասարկում իրականացնող կազմակերպության և Ազգային անվտանգության ծառայության պատասխանատուներին և, հաջորդիվ, Ազգային համակարգող մարմնին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 26-ի 1138-Ն որոշման:

15. ***Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեին***, սույն հավելվածի 1-ին կետով վերապահված իրավասություններից բացի, վերապահվում են հետևյալ իրավասությունները՝

1) մշակում է ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների, ճառագայթային անվտանգության հարցերով իրավական այլ ակտերի նախագծեր,

2) իրականացնում է տիրազուրկ կամ կարգավորող հսկողությունից դուրս եկած ռադիոակտիվ աղբյուրների որոնում, տիպաճշտում, իսկ անհրաժեշտության դեպում՝ բնակչության պաշտպանության կազմակերպման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

3) միջուկային կամ ճառագայթային վթարների դեպքում իրականացնում է ճառագայթային մոնիթորինգ, անհրաժեշտության դեպքում՝ լաբորատոր հետազոտություն, կատարված չափումների հիման վրա իրավիճակի գնահատում, իրավիճակի հնարավոր փոփոխությունների կանխատեսումների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների հարցերով լիազորված պետական կառավարման մարմին անհրաժեշտ պաշտպանական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

4) Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած միջուկային կամ ճառագայթային վթարի մասին միջազգային օպերատիվ ազդարարում է՝ «Միջուկային վթարի մասին օպերատիվ տեղեկացման մասին» կոնվենցիայի պահանջներին համապատասխան,

5) իրականացնում է ռադիոակտիվ աղտոտվածությամբ տարածքների վնասազերծումից հետո աղտոտված տարածքների ճառագայթային մոնիթորինգի անցկացում և իրավիճակի գնահատում և պաշտպանական միջոցառումների մասին առաջարկությունների տրամադրում Հայաստանի Հանրապետության կառավարությանն ու Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը,

6) մասնակցում է Համընդհանուր լաբորատոր ցանցին՝ բնակչության և արտաքին միջավայրի ճառագայթային մոնիտորինգի ռեֆերենս լաբորատորիայի մասով,

7) իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքում կարգավորող վերահսկողությունից դուրս գտնվող ռադիոակտիվ նյութերի հայտնաբերման, վնասազերծման հետ կապված Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 3-ի N 553-Ն որոշմամբ ամրագրված իր գործառույթները:

16. ***Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին,*** սույն հավելվածի 1-ին կետով վերապահված իրավասություններից բացի, վերապահվում է հետևյալ իրավասությունը՝

1) սահմանի նշանակված անցման կետերում «հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ» ներկայացնող կամ դրա կասկածով դեպքեր արձանագրելիս իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 777-Ն որոշմամբ ամրագրված գործողությունները:

17. ***Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը***, սույն հավելվածի 1-ին կետով վերապահված իրավասություններից բացի, վերապահվում են հետևյալ իրավասությունները՝

1) կազմակերպում և իրականացնում է իր սպասարկման ոլորտում արձանագրված վարակիչ հիվանդությունների, քիմիական և ճառագայթային ախտահարումների դեպքերի, օջախների հետազոտությունը, հիվանդների ախտորոշումը, մեկուսացումը, բուժումը, կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումները,

2) աջակցում է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններին հարկադիր բուժման ենթակա հիվանդություններով հիվանդների հոսպիտալացման հարցում՝ վերջիններիս հոսպիտալացումից հրաժարվելու դեպքում,

3) օրենքով սահմանված կարգով մասնակցում է Հայաստանի Հանրապետության տարածքում կամ դրա առանձին մասերում համաճարակների ժամանակ կարանտինային միջոցառումների անցկացմանը,

4) ապահովում է առողջապահական մարմինների հետ համատեղ իրավախախտումների կանխարգելման նպատակով հսկողությունն այն անձանց նկատմամբ, ովքեր տառապում են շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդություններով,

5) ապահովում է վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով բժշկական հիմնարկներ հասցնելու վարակիչ հիվանդություններով տառապող անձանց,

6) կատարում է տարածքի որոշակի հատվածների շրջափակում (շրջապատում)՝ համաճարակների ժամանակ, կարանտինային միջոցառումներ անցկացնելիս կանխելու անկարգությունները, տրանսպորտի, կապի և այլ կազմակերպությունների աշխատանքները խափանող գործողությունները,

7) բնական աղետների, վթարների, համաճարակների ժամանակ քաղաքացիների անձնական և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով անարգել մուտք է իրականացնում քաղաքացիների բնակարան կամ այլ շինություն, նրանց պատկանող հողամաս, կազմակերպությունների զբաղեցրած շինություն կամ տարածք, ինչպես նաև իրականացնում է դրանց զննում,

8) սահմանի նշանակված անցման կետերում «հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ» ներկայացնող կամ դրա կասկածով դեպքեր արձանագրելիս իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 777-Ն որոշմամբ ամրագրված գործառույթները,

9) քիմիական գործոնով պայմանավորված արտակարգ իրավիճակ ներկայացնող դեպքերի դեմ պայքարի գործընթացում իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 8-ի N 861-Ն որոշմամբ ամրագրված գործառույթները:

18. ***Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությանը***, սույն հավելվածի 1-ին կետով վերապահված իրավասություններից բացի, վերապահվում են հետևյալ իրավասությունները՝

1) սահմանի նշանակված անցման կետերում իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 777-Ն որոշմամբ ամրագրված գործողությունները,

2) ապահովում է իր համակարգում գործող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության կողմից հանրային առողջապահության ոլորտում վտանգ ներկայացնող դեպքերի մասին հաղորդումը Միջազգային առողջապահական կանոնների հարցերով տվյալ կառույցի պատասխանատուին, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության պատասխանատուին և, հաջորդիվ, Ազգային համակարգող մարմնին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 26-ի N 1138-Ն որոշման պահանջների:

III. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

19. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման մարմիններին, սույն հավելվածի 1-ին կետով վերապահված իրավասություններից բացի, վերապահվում են հետևյալ իրավասությունները՝

1) ձևավորում են Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների հարցերով մշտական գործող միջոլորտային հանձնաժողով, սահմանում է հանձնաժողովի գործունեության և Միջազգային առողջապահական կանոնների հարցերով ազգային համակարգող մարմնի հետ փոխգործակցության կարգը,

2) միջազգային առողջապահական կանոնների համաձայն պարբերաբար գնահատում և վերանայում են իրենց կողմից ընդունված իրավական ակտերը,

3) աջակցում են Ազգային համակարգող մարմնին՝ մարզում/ քաղաքում գործող կառույցներին Կանոնների վերաբերյալ իրազեկելու գործընթացում,

4) ապահովում են մարզային/քաղաքային ենթակայության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում վարակիչ հիվանդությունների, թունավորումների, քիմիական և ճառագայթային ախտահարումների կանխարգելման վերաբերյալ Ազգային համակարգող մարմնի կողմից սահմանված կարգով ներկայացված իրավական ակտերի, մեթոդական փաստաթղթերի, շրջաբերական նամակների ներդրման գործընթացը,

5) տարածքային կառավարման մարմնում ձևավորում են հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ ներկայացնող դեպքերի էլեկտրոնային բազա (գրանցամատյան),

6) համակարգում են մարզային/ քաղաքային մակարդակում բազմոլորտ վարժանքների կազմակերպման և իրականացման գործընթացը՝ կենսաբանական, քիմիական և ճառագայթային գործոնով պայմանավորված հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակների առաջացման սցենարով,

7) շահագրգիռ պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների համագործակցությամբ մշակում և ներդնում են մարզի/ քաղաքի տարածքում գործող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների, կենսաբանական, քիմիական և ճառագայթային գործոնների հետ աշխատող լաբորատորիաների, այդ գործոններով պայմանավորված հիվանդությունների ախտորոշմամբ և բուժմամբ զբաղվող կլինիկաների ռեգիստր, ինչպես նաև ռեգիստրում գրանցված կազմակերպությունների վերանայված ցանկը և կոնտակտային տվյալները տարեկան կտրվածքով ներկայացնում է Ազգային համակարգող մարմնին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով,

8) շահագրգիռ պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների համագործակցությամբ մշակում և ներդնում են մարզում/քաղաքում համաճարակների պատրաստվածության ընդհանուր ծրագիր,

9) տվյալ մարզի/քաղաքի տարածքում տեղակայված պետական սահմանային անցման կետերում /եթե տվյալ տարածքում առկա է անցակետ/ գործող սանիտարական կարանտինային կետի հետ համագործակցված կազմում են մարզի/քաղաքի տարածքում տեղակայված այն բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ցանկը, ուր տեղափոխվում է սահմանում հայտնաբերված հիվանդը,

10) շահագրգիռ պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների համագործակցությամբ մշակում են կենսաբանական քիմիական, վտանգների ժամանակ հանրային առողջապահության ոլորտում արտակարգ իրավիճակների ծրագիր՝ ընդգրկելով արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մարզային/քաղաքային ծրագրի մեջ,

11) ապահովում են շահագրգիռ կառույցների համակարգված աշխատանքը՝ ձևավորելով վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման հարցերով հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1913-ն որոշման պահանջներին համաձայն,

12) աջակցում են վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի աշխատանքներում բնակչության ընդգրկմանը,

13) աջակցում են պետական կառավարման մարմիններին բռնկումների/ համաճարակների նախապատրաստության և դրանց դեմ պայքարի գործընթացում՝

ա. առողջապահության կամ գյուղատնտեսության ոլորտում պետական կառավարման մարմնի առաջարկությամբ կամ իրենց նախաձեռնությամբ ձևավորում են առանձին հարցերին վերաբերող մշտական կամ ժամանակավոր արտակարգ հակահամաճարակային շտաբ և համակարգում է դրա գործունեությունը,

բ. քննության են առնում բռնկումների/ համաճարակների, վարակիչ հիվանդությունների, քիմիական, ճառագայթային ախտահարումների առանձին խնդիրների վերաբերյալ հարցեր:

14) Հսկողություն են սահմանում իրենց ենթակայության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների՝ առանձին հիվանդությունների, դրանցով պայմանավորված բռնկումների/ համաճարակների պատրաստվածության համար անհրաժեշտ դեղորայքով, անհատական պաշտպանական միջոցներով, ախտահանիչներով և այլնով ապահովվածության նկատմամբ:

15) Ազգային համակարգող մարմնի և շահագրգիռ մարմինների հետ համատեղ գնահատում են իրենց սպասարկման տարածքում բռնկումների/ համաճարակների դիմակայման պատրաստվածության վիճակը:

16) Առանձին հիվանդություններով պայմանավորված բռնկումների/ համաճարակների պատրաստվածության համար, առողջապահական տարածքային մարմինների համագործակցությամբ, մշակում են ծրագրեր՝ հաշվի առնելով հեռավոր, դժվարամատչելի բնակավայրերի առկայությունը, բնակչության կենցաղի առանձնահատկությունները, ավանդույթները, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակեպությունների, լաբորատորիաների հասանելությունը, հիվանդների էվակուացիան և այլն: Ծրագրի կատարման ուղղությամբ շահագրգիռ կառույցների մասնակցությամբ իրականացնում են ամենամյա քննարկումներ, իրականացնում է ծրագրի գործադրման մոնիթորինգ և գնահատում:

17) Առողջապահական տարածքային մարմինների համագործակցությամբ մշակում և ներդնում են բնակչության իրազեկման, բժշկահիգիենիկ կրթության ծրագրեր:

18) Հսկողություն են սահմանում իրենց սպասարկման տարածքի հանրակրթական և հատուկ դպրոցների, նախադպրոցական հաստատությունների, մանկատների, երեխաների խնամքի և պաշտպանության կենտրոնների, վարժարանների, քոլեջների, ուսումնարանների, մանկական առողջարարական և վերականգնողական կազմակերպությունների, ծերանոցների՝ վարակիչ հիվանդությունների, դրանց բռնկումների/ համաճարակների դիմակայման պատրաստվածության, հակահամաճարակային ռեժիմի պահպանման նկատմամբ՝ համագործակցելով տարածքային առողջապահական մարմինների հետ:

19) Մշակում և ներդնում են համաճարակների, բռնկումների ժամանակ սպասարկման տարածքի կառույցներին իրազեկման մեխանիզմներ:

20) Հսկողություն են սահմանում շրջակա միջավայրի համաճարակային նշանակության օբյեկտների՝ հողի, ջրի, օդի նկատմամբ:

21) Ապահովում են բռնկման/ համաճարակի, ժամանակ, ինչպես նաև առօրյա պայմաններում անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը պետական կառավարման տարածքային մարմիններին (քարտեզներ, տեղեկատվություն ջրագծերի տեխնիկական վիճակի մասին, մարզի/ քաղաքի տարածքում տեղակայված սանիտարահամաճարակային հսկողության ենթակա կառույցների ցանկ և այլն):

22) Գործադրում են <<Թափոնների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրավասությունները: